



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

«26» հուլիսի 2022թ. 113-Ձք. Երևան

ՀՐԱՄԱՆ \_\_\_\_\_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության «Ստանդարտացման մեթոդաբանություն» ՏՀ 28 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի առցանց քննարկումների № 1 արձանագրությունը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Ընդունել և 2022 թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտը՝

- ՀՍՏ 1.12-2022 «Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և ստանդարտացման աշխատանքային խմբեր. Կազմավորման և գործունեության կարգը»:

2. 2022 թ. սեպտեմբերի 1-ից չեղյալ հայտարարել ԿՆ 1.1-2005 «Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հիմնադրման և գործունեության կարգը»:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի խորհրդական Հ. Զեյնալյանին:

**Տնօրեն**

**Ժամանակավոր պաշտոնակատար՝**

**ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ**